

A1+

Նրանք իշխանության բարձր օղակներում են

16:50 | Դեկտեմբեր 09, 2009 | ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրը Թրանսփերենսի ինտերնեյշնլ կազմակերպության Հայաստանի գրասենյակի տնօրեն Ամալյա Կոստանյանը կարծում է, որ մենք տխրելու լուրջ պատճառներ ունենք:

«Պատահական չէ, որ դեկտեմբերի 9-ը ՄԱԿ-ը հռչակել է կոռուպցիայի դեմ պայքարի օր, իսկ դեկտեմբերի 10-ը Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օր: Կոռուպցիան եւ մարդու իրավունքները սերտորեն կապված են միմյանց, քանի որ մարդու իրավունքների ոտնահարումները առաջին հերթին կոռուպցիայի արդյունքն են», - գտնում է Ամալյա Կոստանյանը:

ՀՀ-ում կոռուպցիան եւ մարդու իրավունքների ոտնահարումները, ըստ տիկին Կոստանյանի, նույն մակարդակի վրա կգտնվեն այնքան ժամանակ, քանի դեռ պաշտոնյաները կչարաշահեն իրենց իշխանական լծակները, քանի դեռ արդարադատության համակարգը կօգտագործեն այլախոհներին լռեցնելու համար, քանի դեռ երկրում չկա առողջ մրցակցություն: «Վերջին շրջանում մեր երկրում ոչ միայն քաղաքական այլախոհների, այլեւ քաղաքացիականների նկատմամբ է հետապնդում իրականացվում: Սա շատ լուրջ եւ ահազանգոյ խնդիր է», - գտնում է Ամալյա Կոստանյանը:

Նա չի ժխտում, որ ՀՀ իշխանությունները կոռուպցիայի դեպ պայքարելու համար օրենսդրական փոփոխություններ են իրականացնում, սակայն իրականությունն այն է, որ ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարն անկում է ապրում եւ հասարակությունը չի վստահում կոռուպցիայի դեմ պայքարողներին:

«Այն բոլոր արատավոր երեւոյթները, որոնք մեր երկրում նպաստում են կոռուպցիայի զարգացմանը, դեռ չեն հաղթահարվել: **Քանի դեռ մենք ունենք քաղաքական կոռուպցիա, ունենք օլիգարխներ, քանի դեռ չունենք մարդու իրավունքների երաշխիքներ՝ ազատ մամուլ, արդարադատություն մենք չենք կարող լիարժեք պայքարել կոռուպցիայի դեմ**», -ասաց նա:

Ամալյա Կոստանյանը անիմաստ է համարում միջին չինովնիկներին պատժելը, քանի որ գտնում է, որ *կոռուպցիայի հիմնական դերակատարները նրանք ենք, ովքեր այսօր իշխանության բարձր օղակներում են:*